

ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 690
ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 202:— **Պրակները՝** 13, յուրաքանչյուրը 16-ական թերթից:— **Մեծությունը՝** 22×14×1.9 սմ:— **Նյութը՝** սպիտակ մաքուր թուղթ:— **Կազմը՝** սև լաթակազմ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական կապտավուն թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ, 2բ, 18բ, 33ա, 49ա, 64բ, 80բ, 96ա, 112ա, 128ա, 143բ, 159բ, 174բ և 191ա—202բ:— **Տողերը՝** անհամաչափ, 3—23:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն** չունի:— **Գրիչը՝** Ասողիկ Եպիսկոպոս Ղազարյան (1909—1978 թթ.):— **Ժամանակը՝** 1963 թ.:— **Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք:— **Ծանոթագրություն՝** մատյանն ստացված է 1983 թ. օգոստոսի 16-ին Ալեք և Մարի Մանուկյան գանձատան գրադարանից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 3ա.— (Էջմիածին, Գշ. 1 հունվարի 1963 թ.):

Նոր տարուց առթիւ պատարագեցի և քարոզեցի: Պատարագէն ետք կատարուեցաւ Գոհաբանական աղօթք Վեհ. Հայրապետի կենացը, հանդիսադրութեամբ Նորին Վեհափառութեան:

Թ. 5բ.— (Էջմիածին, Կիր. 6 հունվարի 1963 թ.):

Այսօր Վեհափառ Հայրապետը պատարագեց և քարոզեց Մայր տաճարի մէջ, բազմահազար ժողովուրդ լեցուած էր տաճարէն ներս և դուրս: Հայկազուն Սրբազանն ու ես առընթերակայ Վեհափառին, սպասարկեցինք ամբողջ պատարագի ընթացքին: Պատարագէն ետք կատարուեցաւ պատմական ջրօրհնեաց արարողութիւնը:

Թ. 11բ.— (Էջմիածին, Ուր. 18 հունվարի 1963 թ.):

Գիշերը ժամը 1.45ին ռատիօն բացինք և մտիկ ըրինք Բեթղեհէմի այրին վրայէն հայոց ծննդեան արարողութիւնն ու Եղիշէ Պատրիարքին պատգամը:

Թ. 26բ.— (Էջմիածին, Շբթ. 16 փետրվարի 1963 թ.):

Սահակ Արքեպս. Տէր Յովհաննէսեանի քահանայութեան 60րդ ամեակը կատարեցինք իր բնակարանի մէջ:

Թ. 28ա.— (Էջմիածին, Գշ. 19 փետրվարի 1963 թ.):

Այսօր հեռագիր ստացուեցաւ Անթիլիասի Կաթողիկոսարանէն, որով կը գուժէր Զարեհ Կաթողիկոսին անակնկալ մահը:

Թ. 29ա.— (Էջմիածին, Եշ. 21 փետրվարի 1963 թ.):

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1995 թվականի № Ա-ից:

Այսօր Վարդանանց տօնին առթիւ Հայկազուն Սրբազանը պատարագեց և քարոզեց, Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ հանգուցեալ Զարեհ Աթոռակալի հոգւոյն ի հանգիստ, ես ալ ծանուցում ըրի: Եկած էին Զարեհ Սրբազանի ազգականները:

Թ. 44ա.— (Էջմիածին, Ուրբ. 22 մարտի 1963 թ.):

Այսօր առտուն ժամերգութենէն վերջ դիմաւորեցինք շուրջ 40 երկիրներու դեսպանները, որոնք այցելեցին Ս. Էջմիածին և Վեհափառին: Շատ լաւ անցաւ ամէն բան:

Թ. 48ա.— (Էջմիածին, Շբթ. 30 մարտի 1963 թ.):

Առտուն կանուխ սարկաւագներով և քանի մը աշակերտներով գացինք գիւղի եկեղեցին: Հոն պատարագեցի և պատարագի ընթացքին քահանայ ձեռնադրեցի Ճեմարանի աշակերտ Արշակ Տէրտէրեանին և կոչեցի Գրիգոր:

Թ. 57ա.— (Էջմիածին, Գշ. 16 ապրիլի 1963 թ.):

Գիշերը ուշ ատեն, ամերիկեան ռադիոն հաղորդած է որ Շաւարշ Սրբազանին զարկեր են դաշնակցականները մահացու կերպով, Դամասկոսի մէջ:

Թ. 67բ.— (Էջմիածին, Բշ. 6 մայիսի 1963 թ.):

Այսօր լուր ստացուեցաւ որ Անթիլիասի կաթողիկոս ընտրուած է Խորէն Արք. Բարոյեանը Մայիս 5-ին:

Թ. 70ա.— (Էջմիածին, Շբթ. 11 մայիսի 1963 թ.):

Այսօր Շուէտի արտաքին գործոց նախարարը և դեսպանը իրենց խումբ մը հետևորդներով եկան Էջմիածին և այցելեցին Վեհափառ Հայրապետին: Շատ լաւ կերպով ընդունուեցան ու գոհ սրտով հեռացան:

Թ. 74ա.— (Էջմիածին, Կիր. 19 մայիսի 1963 թ.):

Վեհափառը յայտնեց թէ Գնէլ Եպիսկոպոսէն նամակ ստացած է Շաւարշ Եպիսկոպոսի մահափորձի մասին: Իր վրայ յարձակողներէն երեքը դաշնակցական հայեր են եղած, մէկ ալ արաբ մը. հայերը երեքն ալ ձերբակալուած են, իսկ արաբը դեռ չէ բռնուած:

Թթ. 95ա—97ա.— (Շբթ. 29 հունիսի—Գշ. 2 հուլիսի 1963 թ.):

(Խոսվում է Վեհափառ Հայրապետի ընկերակցությամբ Լենինական, Կիրովական և Դիլիջան կատարված այցելության մասին):

Թ. 102բ.— (Էջմիածին, Շբթ. 13 հուլիսի 1963 թ.):

Շնորհք Պատրիարքը եկաւ այսօր Մայր Աթոռ Վազգէն վարդապետի հետ միասին: Զինքը դիմաւորելու գացինք ամբողջ եկեղեցական դասով:

Թ. 106բ.— (Էջմիածին, Կիր. 21 հուլիսի 1963 թ.):

Այսօր Վարդավառի տօնն էր: Շնորհք Պատրիարքը պատարագեց և քարոզեց: Պատարագէն ետք ճաշկերոյթ կար Կաթողիկոսարան(ում) ի պատիւ Շնորհք Պատրիարքին: Բաւական ազգայիններ հաւաքուած էին: Երեկոյեան գացինք երգի-պարի անսամբլի, Կաթողիկոսին ու Պատրիարքին հետ միասին:

Թ. 107բ.— (Էջմիածին, Գշ. 23 հուլիսի 1963 թ.):

Առտուն ժամը 6.30ին գացինք Հայկազուն Սրբազանին հետ Երևան, Վեհափառին Վիլլան, ճամբու դնելու Շնորհք Պատրիարքը:

Երեկոյեան ժամերգութենէն յետոյ Վեհափառին մօտ գացինք ամբողջ միաբանութեամբ: Վաղը Վեհափառը պիտ երթայ մէկ ամսուան համար Զէխոսլավաքիա:

Թ. 132ա.— (Էջմիածին, Կիր. 8 սեպտեմբերի 1963 թ.):

Պատարագի ընթացքին հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Աղէքսանդրիոյ քահանայ Տէր Հայկազուն Ոսկերիչեանի հոգւոյն:

Թ. 138ա.— (Էջմիածին, Ուրբ. 20 սեպտեմբերի 1963 թ.):

Իրիկունը Երևան գացինք: Ստադիոնի մէջ տեղի ունեցան Սայաթ-Նովայի 250-ամեակին նուիրուած հանդիսութիւններ: Հոծ բազմութիւն հաւաքուած էր:

Թ. 141ա.— (Էջմիածին, Եշ. 26 սեպտեմբերի 1963 թ.):

Այսօր ի պատիւ Ալէքսի Պատրիարքին տրուեցաւ ճաշկերոյթ Վեհափառին կողմէ: Միաբանութեան բոլոր անդամները և կրօնական գործերու առընթեր նախարարութիւնը (ներկայ էին): Երեկոյեան ժամերգութեան մասնակցեցաւ Պատրիարքը: Երգիչ խումբը Պատարագէն ինչ-ինչ կտորներ երգեց: Վերջէն Ազգային Եկեղեցական Ժողովի ֆիլմը ցուցուեցաւ հիւրին:

Թ. 144բ.— (Էջմիածին, Դշ. 2 հոկտեմբերի 1963 թ.):

Այսօր ժամը 4ին գացինք օդակայան ճամբու դնելու Վեհափառին, Հայկազուն Սրբազանին, Արսէն վարդապետին և ճարտարապետ Մազմանեանին:

Այս գիշեր ռատիօէն հաղորդեց Վեհափառ Հայրապետին հաղորդագրութիւնը իր ճամբորդութեան մասին լրագրութեան թղթակիցին:

Թ. 170բ.— (Էջմիածին, Ուր. 22 նոյեմբերի 1963 թ.):

Իրիկունը ժամը 11.30ի ատեն ամերիկեան ռատիօն հաղորդեց որ Ամերիկայի նախագահ Ճան Քէնէտին մահացու կերպով վիրաւորուած է, անձնանօթներու կողմէ: Ասիկա զգայացունց լուր մըն է ամբողջ աշխարհի համար:

Թ. 172բ.— (Էջմիածին, Գշ. 26 նոյեմբերի 1963 թ.):

Այսօր Լօնտոնէն Անգլիքըն Եկեղեցւոյ Եպիսկոպոսէն հեռագիր կար Վեհափառի անունին, ուր Դերենիկ Եպս.ի մահուան առթիւ ցաւակցութիւն կը յայտնէին: Ասիկա մեզի համար ցաւալի և անակնկալ լուր մըն էր:

Թ. 188ա.— (Էջմիածին, Եշ. 26 դեկտեմբերի 1963 թ.):

Այսօր ազգիս Վեհափառ Հայրապետը վերադարձաւ իր Հնդկաստան կատարած շրջագայութենէն: Գացինք օդակայան առտուն ժամը 11-ին իրեն դիմաւորութեան:

Թ. 190բ.— (Էջմիածին, Գշ. 31 դեկտեմբերի 1963 թ.):

Այսօր տարւոյս 1963-ի վերջին օրն է: Երեկոյեան Ճեմարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Կաղանդի երեկոյ, նախագահութեամբ ազգիս Վեհ. Հայրապետին: Շուրջ հարիւր հոգի՝ սաներ, միաբանութեան անդամներ և պաշտօնեաներ հաւաքուած էին Կաղանդի սեղանին շուրջ: Եղան ճառախօսութիւններ, երգեր, արտասանութիւններ զանազաններու կողմէ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1բ.— Ասողիկ Եպս.:
Թ. 3ա.— 1963:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի վրա գրված է)
AGENDA 1961.
(Մատյանում կա Մայր Աթոռի հաշվապահության № 48 Ելքի հաշվի պատճենը, 25 հոկտեմբերի 1963 թվականով):

№ 691
ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ 156:— **Պրակները՝** 13, յուրաքանչյուրը 12-ական թերթից:— **Մեծությունը՝** 28.5×20.6×1.7 սմ.: **Նյութը՝** դեղնած բարակ թուղթ:— **Կազմը՝** սև գույնի լաթակազմ հաստ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական դեղնավուն թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միապյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ, 156ա և 156բ:— **Տողերը՝** 13:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր և հայկական նոր խազեր: —**Զարդագրություն՝** մատյանն ունի բավականի գեղեցիկ զարդագրեր (թթ. 1ա, 2ա, 45ա, 54ա, 92ա և այլն) և բազմաթիվ մանր զարդանկարներ (քնար, ծաղիկ, ճյուղ և այլն):— **Գրիչ՝** Ս. Գ. Թադոսյան:— **Ծաղկողը՝** շատ հավանաբար նույն ինքը գրիչն է:— **Ժամանակը՝** 1903—5 թթ.:— **Վայրը՝** Ռոդոստո (Թուրքիա):— **Ծանոթագրություն՝** Վեհափառ Հայրապետը մատյանը Մայր Աթոռի ձեռագրատուն հանձնեց 3 հոկտեմբերի 1983 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 2ա.— **Կանոն** Ծննդեան Սբյ Աստծնին ի ծնողաց իւրոց ի Յովակիմայ և յԱննայէ:
Թ. 59ա.— **Կանոն** Անտոնի Անապատականի:
Թ. 65ա.— **Կանոն** Դաւթի Մարգարէին և Յակոբայ Առաքելոյն:

Թ. 67բ.— **Կանոն** Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային:
Թ. 72ա.— **Կանոն** Գլխաւոր Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի:
Թ. 77ա.— **Կանոն** Որդւոցն Որոտմանց Սրբոց Առաքելոցն Յակոբայ և Յովհաննու:
Թ. 99ա.— Շրկն. Սրբոյն Սարգսի Զօրավարին:
Թ. 114բ.— Յառաջին Շաբաթու Տօն է Սրբոյն Թէոդորոսի և ասի Մնկնք:
Թ. 115ա.— **Կանոն** Բ. Կիւրակէին Աղուհացից:
Թ. 130ա.— Շաբաթ օր տօն է Սրբյն. Կիւրղի Եպէմայ հայրապետին Մնկնք:
Թ. 152ա.— Ցանկ:
Թ. 155բ.— Ցանկ Մեծացուսցէիցն:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.— Տետր Ա.
Շարականաց
Օրինակեալ 1889 Օգոստ.ի 1ի Զայնագրեալ Ա. հատոր Տետրակէն:
Ս. Գ. Թադոսեան
Յուլիս 7, 1908
Ռօտոսթօ:
Թ. 151բ.— Վերջ
Շարականաց Ա. Հատորին — 1905 Յունիս 12:
Թ. 155ա.— 1905, 16 Յունիս Եշ.:
Թ. 155բ.— Սոյն Մեծացուսցէներն միայն հատորիս գտնուածներն են:
Ս. Գ. Թադոսեան:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի վրա տպված է ոսկեգույնով) 1:
Թ. 1ա. —Թիւ 9:

№ 692
ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ 85 (թթ. 1ա—85բ):— **Պրակները՝** 8,5, յուրաքանչյուրը 10-ական թերթից:— **Մեծությունը՝** 20.7×21×2 սմ.:— **Նյութը՝** մաքուր սպիտակ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում մի հատ բարակ դեղնավուն հասարակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միապյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ, 2բ, 83բ—85բ:— **Տողերը** 13:— **Գծումները՝** մատիտով քաշված:— **Գիրը՝** շեղագիր, նաև հայկական խազեր:— **Զարդագրություն՝** մատյանն ունի բավական գեղեցիկ զարդագրեր (թթ. 2ա, 3ա, 10ա, 23ա և այլն) և բազմաթիվ մանր զարդանկարներ (ծաղիկ, ճյուղ, զարդ և այլն):— **Գրիչը՝** Ս. Գ. Թադոսյան:— **Ծաղկողը՝** շատ հավանաբար նույն ինքը գրիչն է:— **Ժամանակը՝** 12 հոկտեմբերի 1905 թ.:— **Վայրը՝** Ռոդոստո (Թուրքիա): **Ծանոթագրություն՝** Վեհափառ Հայրապետը մատյանը Մայր Աթոռի ձեռագրատուն հանձնեց 3 հոկտեմբերի 1983 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 3ա.— **Կանոն** Դ. Կիւրակէին Աղուհացից:
Թ. 18բ.— Շաբաթ օր Տօն է Սրբոց Քառասնից Մանկանց:
Թ. 23ա.— **Կանոն** Ե. Կիւրակէին Աղուհացից:
Թ. 37ա.— Շաբաթ օր տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին;
Թ. 43բ.— **Կանոն** Զ. Կիւրակէին Աղուհացից:

Թ. 56ա.— Է. Հարց Դկ. Ստեղի: Մեծի պահոց վեցերորդ Շաբաթու Ուրբաթու Աւուրն:
Թ. 62ա.— **Կանոն** Ղազարու Յարութեան:
Թ. 66բ.— **Կանոն** Ծաղկազարդի Կիւրակէին Գալատեան Տուն յԵրուսաղէմ:
Թ. 73բ.— **Կանոն** Մեծի Երկուշաբաթին:
Թ. 78ա.— **Կանոն** Մեծի Երեքշաբաթին:
Թ. 82ա.— **Կանոն** Մեծի Չորեքշաբաթին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 2ա.— Տետր Բ.
Շարականաց.
Օրինակեալ 1889 Նոյեմբեր 28-ի Զայնագրեալ Բ. Հատոր Տետրակէն:
Ս. Գ. Թադոսեան
1905 Հոկտեմբեր 12
Ռօտոսթօ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի վրա տպված է ոսկեգույնով մի փոքրիկ խաչ և հետևյալը)
Notes 2:
S. O. T.
Թ. 2ա.— Թիւ 10:
Թ. 34բ.— Մեծ. ԴՁ, «Ուրախացիր Աստուածածին»:
Թ. 43բ.— Ճաշու ԳԿ. Լերինք ամենայն:
Թ. 64բ.— Մեծացուցէ ԲՁ, Սուրբ և Աստուածածին Մարիամ ցանկալի:

№ 693
ՀԱՒԱՔԱԾՈՒ

Թերթերը՝ 75 (թթ. 86ա—160բ):— **Պրակները՝** 7.5, յուրաքանչյուրը 10-ական թերթից: **Մեծությունը՝** 20.7×21×2 սմ.:— **Նյութը՝** մաքուր սպիտակ թուղթ:— **Կազմը՝** կարմիր գույնի լաթակազմ հաստ ստվարաթուղթ:— Նախորդ և սույն երկու մատյանները կազմված են միասին:— **Պահպանակները՝** վերջում մի հատ բարակ դեղնավուն հասարակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 86ա, 114ա—115ա, 119բ—155ա, 157բ—160բ:— **Տողերը՝** 39—43:— **Գծումները՝** մատիտով քաշված:— **Գիրը՝** շեղագիր: —**Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Գառնիկ քահանա Գամշյան:— **Ժամանակը՝** 5 փետրվարի 1960 թ.:— **Վայրը՝** Ստամբուլ (Թուրքիա):— **Ծանոթագրություն՝** Վեհափառ Հայրապետը սույն մատյանը Մայր Աթոռի ձեռագրատուն հանձնեց 3 հոկտեմբերի 1983 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 86բ.— Օրացոյց-Տօնացոյց
Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ
«Ժամանակ»ի յիսնամեակին առթիւ նուէր
«Ժամանակ»ի ընթերցողներուն
1958
Թուականին Քրիստոսի
Եւ Բուն Թուականին Հայոց
4450—4451
Տոմարական թուականին Հայոց
1407—1408:

Պատրաստեց՝ Յովհաննէս Վարժապետեան:

Թ. 115բ.— Եկեղեցական Ս. Անօթներու նշանակութիւնը:

Երկու խօսք հեղինակէն.

Ա. Պանակէ:

Թ. 116ա.— Պոլսոյ քահանաներու ձեռնադրութեան թուականները և անուններն ու տարիքը:

Թ. 116բ.— Բ. Գաւազան (Ասա):

Գ. Բուրվառ:

Թ. 117ա.— Դ. Սաղաւարտ:

Խոյր-Զաթալթագ:

Թ. 117բ.—Վակաս:

Վեղար:

Թ. 118ա.— Շուրջառ:

Շապիկ:

Թ. 118բ.— Գօտի:

Ղենջակ:

Բազպան:

Ուրար:

Փորուրար:

Հողաթափ:

Թ. 119ա.— Փիլոն:

Թ. 155բ.— Ցանկ (№ 692 ձեռագրի նյութերի —Ն. Մ.):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 86բ.— Ընդօրինակեց «Ժամանակ» թերթի մէկ տարուան հաւաքածոյէն: Տ. Գառնիկ քհնյ. Գամչեան:

Թ. 104ա.— Ընդօրինակութիւն «Ժամանակ» օրաթերթի 17—8—958 և 18—8—958 թուականներէն:

7—8—958 Սկիւտար.

Շաւարշ Քհնյ. Պալըմեան:

Թ. 115բ.— Այս ծանօթութիւնները գրուած են «Արշաւ» օրաթերթի 5 Փետր. 1960 թուէն շարունակաբար, Տ. Գառնիկ Քհ. Գամչեանի ձեռքով:

№ 694
ՀՄԱՅԻԼ
(Արաբերէն)

Թերթերը՝ 3 կտոր:— **Մեծությունը՝** լայնքը՝ 6.5 սմ., երկայնությունը՝ Ա=46, Բ=45.5 և Գ=45.5 սմ.:— **Նյութը՝** դեղնած հասարակ մաշված թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** անբավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Տողերը՝** Ա=44, Բ=44 և Գ=49 տող:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** արաբական տառերը:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Մուրադ Սուլեյման:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթագրություն՝** Խորեն ավագ քահանա Շուշանյանը 1954 թ. դեկտեմբերի 2-ին նվիրել է Ն. Միքայելյանին, իսկ վերջինս էլ 1983 թ. հոկտեմբերի 24-ին այն նվիրել է Մայր Աթոռի ձեռագրատան:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Ա կտորի սկզբում գրված է պատվիրատուի անունը արաբերենով)

Մուրադ Սուլեյման;

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Բ կտորի ետևի մասում գրված է հետևյալը)

Նվեր է ստացված Տ Խորեն ավագ քահանա Շուշանյանից 2 Դեկտեմբերի 1954 թ. Ս. Էջմիածնում:

Արաբերեն սույն համայիլը նվիրում եմ Մայր Աթոռի Ձեռագրատանը:

24—10—83 թ. Ն. Միքայելյան:

№ 695
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
(Հայատառ պարսկերէն)

Թերթերը՝ 36:— **Պրակները՝** 2, Ա՝ 20 և Բ՝ 16-ական թերթից:— **Մեծությունը՝** 24.5×19.3×0.8 սմ.:— **Նյութը՝** դեղնած հասարակ թուղթ:— **Կազմը՝** թղթակազմ բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** երկսյուն՝ թթ. 2բ—3ա և 32բ—35բ, մնացած մասն ամբողջությամբ միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 36ա—36բ:— **Տողերը՝** 21—26:— **Գծումները՝** մատիտով են քաշված:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն** չունի՝— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Ծանոթագրություն՝** մատյանը Կահիրեից բերված է Երևան 1962 թ. Տիկին Թագուհի Տեր Միքայելյանի միջոցով: Ն. Միքայելյանն այն նվիրած է Մայր Աթոռի ձեռագրատանը 1983 թ. հոկտեմբերի 24-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մատյանը պարունակում է թվով 58 բանաստեղծություններ և ոտանավորներ, որոնց մի քանիսին վերնագրերը տրվում են ստորև.—

Թ. 1ա.— Թուհվէի վահպի:

Թ. 4ա.— Գըթայի շէրի՛է տէր հարֆի էլիֆէշ իպթիտա:

Թ. 5ա.— Գըդաի՛ չէպէնտէյի րէնկին էտոէլիֆ (3):

Թ. 6ա.— Իյն գըդա՛ի պա նիւքթէ շիպաչուն կիւլի շատապ: Պա (4):

Թ. 6բ.— Գըդա՛ի չուն մէհրումէհ փէրթէվ ֆէշայի ին քիթապ: Պա (5):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 35բ.— Պու թարիխ ելէ շէյլի թուհֆէ միւքիլ խիթամ օլտը:
Շէհի մանշումէքիմ փէյվէսթէի հիսնի նիզամ օլտը.
Վէզիրի աչամընն նամի շէրիֆելէ պէ նամ օլտը:
Կէթուրտիմ սիւնպիւլիւսթանի հիւնէրտէն պէրկի սէպշէմտիր,
Կիւլիւ սիւնպիւլ կեպի միեյրայէի ֆարգիէնամ օլտը:
Գահիրէմ գուվվէթինտէն պիլմէմ ալա իֆթիխար իթմէմ.
Միւճէրրէտ լուդֆի հագգելէ փէշիրայի խիթամ օլտը:
Օգունտուգճա տիւա՛ի խայրէ մազհար օլմա տըր մագսուտ:
Պու մատլէմ պէնտէի նաքեամէ ագսաի մէրամ օլտը:
Հէզարան շիւքր իտուպ հագգ տիտիմ իթմամի թարիխին.
Պի համտիլլահ պու շիյպա թուհֆէի վէհպի թէմամ օլտը:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(Կազմի առաջին երեսի ներսում գրված է).

C'est livre apartenant à Minas Jean à 1872 Octobre 25, celui qui trouve cet livre il faut lui donné etc.

(Առաջին 12 բառերը կրկին անգամ գրված են մատիտով: Ապա երեք տող արաբերենով են գրված, որոնց առաջին երկու տողը հետագայում ջնջված են):

Moi que je suis trouvé cet livre dans une magazin le 1883 Mars 20/2 et je ne ..... pas à sa maître qui nomait Minas Jean maintenant est aparten..... Aram Manuelian.

Թ. 1ա.— Թահվէի (այստեղ կան նաև արաբական թվանշաններով չորս թվեր):

Թ. 36ա.— Ձեռագիրը Կահիրեից (Եգիպտոս) բերված է Հայաստան ձեռամբ Տիկ. Թագուհի Տեր Միքայելյանի: Որդին այն սիրով նվիրում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ձեռագրատանը:

24 Հոկտեմբեր 1983 թ. Ն. Միքայելյան:
Երևան.

Թ. 36բ.— (Այստեղ գրված է արաբերեն այբուբենը):

Ըլքէլէ մըզմուռ է միսլ շուրպ ըլսիմ ըլ քէլէմ ըլ մուռ լիպ, ըլլէ չի հու պէնի ատէմ:

(Այստեղ կա նաև արաբատառով գրված երեք տող կարճ գրություն և ստորագրություն, ինչպես նաև չորս թվանշան և ընդհանուր գումարը 58, որ ըստ երևույթին ներկայացնում է բանաստեղծությունների ընդհանուր քանակը:

(Կոնակի կազմի մեջի կողմը գրված է)

Օհաննես Յովսեփեան:

№ 696
ԱԻԵՏԱՐԱՆ

Թերթերը 245:— **Պրակները՝** 21, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացառությամբ ԻԱ պրակը, որ 5 թերթ է միայն:— **Մեծությունը՝** 23.2×17×6.1 սմ.:— **Նյութը՝** դեղնած դիմացկուն հաստ թուղթ:— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի երկու երեսին ճնշումով խաչեր ու զարդեր են նկարված: Առաջին երեսին ամրացված են արծաթյա փոքրիկ մի խաչ և 17 գամեր (7 հատն էլ ընկած են): Սկզբում երկու բռնիչներ են եղած, սակայն այժմ պակասում են:— **Պահպանակները՝** սկզբում կա մի թերթ դեղնած մագաղաթ:— **Վիճակը՝** գերազանց:— **Գրությունը՝** երկսյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա, 111ա և 185ա:— **Տողերը՝** 22:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** մատյանում կա չորս ավետարանիչների նկարները (թթ. 1բ, 67բ, 111բ և 185բ), չորս գլխազարդեր (թթ. 2ա, 68ա, 112ա և 186ա), որոնք միջին որակի են: Կան նաև գեղեցիկ թռչնագրեր, զարդագրեր, գազանագրեր (68ա, 112ա) և հրեշտակագիր (2ա): Բացի այդ ձեռագրում կան նաև բազմաթիվ գեղեցիկ զարդեր և ծաղիկներ, խաչեր և գմբեթներ, սրբեր և թռչուններ, լուսանցազարդեր և անձինք:— **Գրիչը՝** Դավիթ քահանա:— **Պատվիրատուները՝** Թորոս և Գոհար կողակիցներ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1683 թ.:— **Վայրը՝** Աղբակ գյուղ (Էրընկանի), Վանի շրջան:— **Ծանոթագրություն՝** 1983 թ. հոկտեմբերի 27-ին մատյանը գնված է Թբիլիսիի բնակիչ Վալերի Մուրադյանից, որի նախնիք շատ հավանաբար Վրաստան են բերած Արևմտյան Հայաստանից Առաջին մեծ պատերազմի տարիներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 2ա.— Մատթեոսի ավետարան:
Թ. 68ա.— Մարկոսի ավետարան:
Թ. 112ա.— Ղուկասի ավետարան:
Թ. 186ա.— Հովհաննեսի ավետարան:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 242բ.— Փառք անսկզբանն և սկիզբն ամենայնի անեղէին. և գոյացուցչին բնաւից անվախճան և անսահման էացուցչին. և կատարումն բոլորէիցս. էիցս միակին. եզակի, և միում աստուծոյ: Որ անշարժ գոլով շարէ զարարածս ի կեանս. և ի փրկութի.

էիցէ ակն և կենդանեաց կեանս և ի փրկութի էիցէ ակն կենդանեաց կեանքն։ Որ ան փոփոխ գոլով միշտ յէութէ անեզր և անվայրապիսակ։ Լրումն և բովանդակիչ ամենայնի և յամենայնէ, և յամենայնէ անհասէ։ Որպս ի մասունս և ի բոլորս, և ինքն ոչ մասն և բոլոր որպէս թէ զմասն և զբոլորն զամ ինքն ունի և կրէ զամ արարածս բանիւ զօրութեն իւրոյ։

Գերապիր գոլով լնու զամ, և անհասէ յամէ որում բան և իմաստութի և լեզու տուեալ բոլորէիցս հանցուք աւուրի, և փառս Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Իսկ ի չորից աւետ(թ. 243 ա)տարանչացն խորհուրդ բազմօրինակիմն ցուցմամբ տեսանի։ Զի ոմանք ասեն թէ չորից աւետարանչացն չորք անկիւնք արարածոց։ Արևելք, Արևմուտք, Հիւսիս, Հարաւ պարտ էր համապիւռ քարոզեալ զաւետարանն։

Իսկ ոմանց հաճոյ թուեցաւ ընդ չորից մշտահոս գերոցն յաղենական աղբերէն յառաջ խաղացեալ առ ի տիեզերաց առոգումն, Ֆիսոն Գեհոն Տիգրիս և Եփրատէս։ Եւ ասցա գոլով ճմանապէս թուով ուռճացեալք ի կենդանական աղբերէն ոռոգանել զպասքեալ միտս մարդկային բնութեան։ Նոյն օրինակ ըստ տեսութենէ Եզեկիէլի քառակերպեան աթոռոյ, Մարդ, Առիւծ, Եզն, Արծիւ։ Զանմարմնոցն տր տեսանելով բազմեալ ի փառացն աթոռ, իմանալի ցուցմամբ, զիսնամս բոլոր բնութեան զակն արկումն։ Որ ածապէս և տիրաբար բերմամբ ճշանակէ զլինելն առ ի հողածինս անմահից զմահկանացուս ընդու(թ. 243բ)նել հաղորդս։

Եւս ի գերակատարն հանեալ ի փառս, վազի փառաց թագաւորն Քս, փառակիցն Հօր և Հոգւոյն սրբոյ, զմերս առեալ բնութի։ Ըստ ինքեան միացոյց ածութենն։ Ուսուցանելով մի որդի դաւանել որ յայ Հօրէ և որ Մարիամայ սրբոյ կուսէ, անձառելի միաւորութեամբ։ Զոր աւետարանս ուսուցանեն բանք, միոյ ի կատարած հաւանութք հաւատոհաստատ կարգօք, ի նոյն յարելով յառաքելաւանդ քարոզութի, Որ զածախօսն վարդապետութիւն դրոշմեալ զսակաւս առ ի բազմացն, առ ի հաւատալ եթէ Յս Քս է որդի Այ։ Ըստ վեհին Յովհաննու հաւատալ և զկեանս ընդունել յանուն նորա։ Որ ետ կարողութի մեղսամած և անարիեստ գրչի Դաւիթ մեղաւոր բինի, հաստանել յաւարտ սորին, զի շնորհօք սր Հոգւոյն սկսայ և ողորմութք նորին աւարտեցի, ի խնդրոյ բարեմիտ և ածայսէր ուստա Թորոսին և կողակցին (թ. 244ա) Գուհարին, որ ստացան զսր աւետրնս յիշատակ հոգոցն իւրեանց և ծնօղացն Ծաւնազարին և Հոռոմին, և եղբօրն Տէր Եղիային և կղկցուն Զմրութին, որդւոցն Վարդանին, Ոսկանին, Մարտիրոսին, հօրեղբօրն Մարտիրոսին, դստերն, Մարգարտին, քեռցն Նուրարին, Ղարիպին, մեծ պապուն՝ Ոսկանին և մամուն՝ Մարգարտին, և անչիչին յիշատակ ստացան զվարդապիթիթ բուրատանս։ Յիշելով զասացեալն ի մարգարէին, թէ երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և ընդանի Եէմ, ըստ այմ օրինակի և մեծահաւատ տանուտէրն ուստա Թորոսն և Գուհրն, ջերմեռանտ սիրով ետուն գրել զաւետարանս հոգևոր զաւակի ի Սր Եկղցին, որպզի վայելեսցին մանկունք Սր Եկեղեցւոյ և ուրախասցին սօվաւ հանապազ, և յիշեսցեն անմոռաց յիշմամբ, յերկնագունաց յաղօթս իրնց, զյառաջ յիշեցեալսն, զուստա (թ. 244բ) Թորոսն և Գուհարն և զամ արեան մերձաւորսն, մանաւանդ և Այ ողորմի ասել ի սոսկալի ժամ սր պատարագին, ամէն։

Եւ արդ ես անպտուղս ի բարեաց, մեղաւորս ի յարդարոց, և անկատարս ի կատարելոց, մեղանչականս յանմեղաց, անկարգս ի կարգաւորաց, անյիշելիս ի գրչաց, անարուեստս արուեստաւորաց, տգէտս ի գիտնականաց, բազմամեղ սուտանուն բինի տեսի զսէր և փափագ Թորոսին և Գուհարին զոր ունէր առ հոգևորսն, և ետուն զոսկի և արծաթ Գուհարն և ետ գրել և ինքն տարաժամ մահուամբ փոխեցաւ առ Քս, անժառանգ, և ըստ իմում տկար աննամբս, յանձն առի վս կարեաց իմոց, և ամենակարող զօրութքն Այ կատարեցի։ Այլև փոխանակ այմ կենացն, տացէ նմա Տր Այ զանանցական մեծութիւն և դասակից և պսակակից արասցէ ընդ ամ սրսն իւր, ամէն։

Արդ գրեցաւ սա ի յԱղբակ, ի գիւղն որ (թ. 254ա) կոչի Էրբնկանի ընդ հովանեաւ սր Ստեփաննոս Նախավկայի, ի դառն և ի նեղ ժամանակիս, ի թրւաբերութեան Հայոց ի ՌՃ և ԼԲ (—1683 թ.—Ն. Մ.) ամին, և առաջնորդութեն Եսայի վարդապին, ի իշխանութեն Խօսրով փաշին։ Եւ դուք հանդիպօղք սր աւետարանիս, հայրք և եղբարք, ընթերցողք և լսողք, յերեսս անկեալ աղաչեմ զսրբութիդ ձեր, ասասցիք բարձր ձայնիւ, ուղիղ սրտիւ, և լիակատար բերանով Այ ողորմի ասացէք նոցա հոգւոյ, և Այ ողորմեսցի իւր միւսանգամ գալստեանն ամէն, Դրձ աղաչեմ զձեզ ով սրք և սիրեցեալք Քի ածայսօս սր հայրք և եղբարք ընդ նոսին և զիս զանարժանս և զիսաւարեալ մեղօք, զանյիշելի Դաւիթ գրիչս յիշման արժանի արէք, և զծնօղսն իմ զԱստեփաննոսն և զԵթարն, և կենակիցն իմ զԱպլվարն, և զորդիսն իմ զԳէորգն, և Մեսրոպն, և զդուստ(ր) իմ զԳուհարն, որ ետ գրել զսր աւտրնս,

և ինքն սղամաճուամբ փոխեցաւ, և ոչ եղև (թ. 245բ) զաւակ, սա է ժառանգ և որդի ի յայսմ աշխարհիս, և դուք ճանդիպօղք ով սբ հայրք և եղբարք ողորմի ասացէք, և Աստ ձեզ ողորմեսցի իւր միւս անգամ գալստեան ամէն։ Հայր մեր որ յերկն։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի սկզբի մագաղաթյա պահպանակի կոնակին գրված է)

... ասանէն մաքքիլ

... ձէպ զեթնուլ չգգառոնն

... ի էզեռ։

Թ. 1ա.— Գրչան։

Թ. 245բ.— Ի խնդրոյ բարեմիտ և ածասէր ոսկերիչ Փոխանին և իւր պապուն՝ Միրագին և հօրն՝ Մինասին, մօրն՝ Նուբարին, կողակցն Նարգզին, եղբարցն՝ Նիսանի, Յովանէսին, որդոցն՝ Պատալին, Սաֆարին, ամէն։

Դրձլ յիշեցէք և Աստ ողորմի ասացէք բարեմիտ և ածայսէր Եղեայզար քինչին, հօրն Տր Նիկաղոսին, մօրն Սիմէին, կողկցն Գոհարին և ձորաբոյս որդոյն Նիկողայոսին, դքստերն Ծաղգուլին, ամէն։

(Ծարուձակելի)